



ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԾԻՐԻՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

16. Բաբգեն Ա Որմսեցի (490—516).— Աշակերտել է Մանդակունուն, որին և հաջորդեց. Վանանդի եպիսկոպոս. գումարել է Դվինի 506 թվի եկեղեցական ժողովը, որին մասնակցել են նաև վրացիք և աղվանք: Այս ժողովում, երկրորդ անգամ լինելով, հալերը մերժեցին քաղկեդոնական դավանանքը և խզեցին իրենց հարաբերությունները հույների հետ:

Դժբախտաբար ոչ պատմիչները և ոչ էլ հետագա ուսումնասիրողները չեն խոսում Բաբգեն կաթողիկոսի թաղման վայրի մասին: Միայն Օրմանյան սրբազանը գրում է. «Մահվանը վրա ուրիշ մանրամասնություն պիտի չկարենանք տալ, պատմագիրներն բան մը ավանդած չըլլալով»²⁹:

- 17. Մամվել Ա Արծկեցի (516—526)
- 18. Մուշե Ա Այլաբերեցի (526—584)
- 19. Սահակ Բ Ուղկեցի (584—589)
- 20. Քրիստափոր Ա Տիրառիջցի (589—545)
- 21. Ղևոնդ Ա Եռաստեցի (545—548)
- 22. Ներսես Բ Բագրևանդցի (548—557)

Վերոհիշյալ վեց հայրապետների մահվան և թաղման մասին ինչպես պատմիչները, այնպես նաև ավելի ուշ հետազոտող պատմիչների և բանասերների մոտ ոչ մի տողի չենք հանդիպում:

23. Հովհաննես Բ Գաբեղյան (557—574).—Գաբեղյանը Սյունյաց Ձեղվան գյուղից էր: Գումարեց Դվինի երրորդ ժողովը 565 թվին, մաքառելու համար Աեստորակաւնության և քաղկեդոնականության դեմ: Վարդան Բ-ի ապստամբության ժամանակ, երբ պարսիկները ավերեցին Հայաստանը, Հովհաննես Բ-ը իշխանների և եպիսկոպոսների հետ Բյուզանդիոն գնաց 572 թվին և երկու տարի մնալով Կ. Պոլսում, մեռավ այնտեղ:

Գրական գործերից հիշվում են «Ի յայտնութիւն Քրիստոսի» ճառը, «Քարոզ մը», նաև թարգմանել է տվել «Էակից գիրք»-ը³⁰: Վախճանվել և թաղվել է Կ. Պոլսում: «Մեզ հայտնի է ժամանակակից պատմիչ արժանահավատ Հովհաննես Եփեսացուց, որ հայոց Հովհաննես Բ Գաբեղեցի կաթողիկոսը... 571 թվին բազմաթիվ եպիսկո-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1971 թվականի № Ա-ից:

²⁹ «Ազգապատում», մասն Ա, էջ 513:

³⁰ «Ազգապատում», մասն Ա, էջ 562—563:

պրնների և իշխանների հետ, փախել է Կ. Պոլիս, ու այնտեղ երկու տարուց հետո, 573-ին, մեռել ու թաղվել...»³¹:

Նույնն է վկայում նաև ասորից Միխայիլ պատրիարքը, թե Հովհաննես Բ կաթողիկոսը վախճանվել է թաղվել է Կ. Պոլսում: «Որ և յաւելոյ՛ նորա ի Կոստանդնուպոլիս, ննջեաց ողորմախառ խոստովանութեամբ, և մեծ պատուով անփոփեցաւ յողորմախառացն»³²:

24. Մովսես Բ Եղիվարդեցի (574—604).— Եղիվարդեցու օրոք հունաց Մորիկ կայսրը (582—602) ժողով է գումարում Պոլսում (592—593) և պահանջում, որ հայերը քաղկեդոնական դավանանքը ընդունեն: Եղիվարդեցին մերժում է:

Ապրել և գործել է Դվինում, հավանաբար, վախճանվել ու թաղվել է նույն տեղում:

25. Աբրահամ Ա Աղբաթանեցի (607—615).—Ռշտունյաց գավառի Աղբաթանից գյուղից էր: Նրա օրով 608 թվականին տեղի է ունենում վրաց եկեղեցու բաժանումը հայ եկեղեցուց: Աբրահամ կաթողիկոսը աշխատում է վերացնել բաժանման պատճառները՝ Սմբատ Վրկան մարզպանի պաշտպանությամբ: Նա երեք թուղթ է գրում վրաց Կյուրիոն կաթողիկոսին, աշխատելով համոզել և նա պահել նրան իր մտադրությունից: Բայց այդ չի հաջողվում Աբրահամ Ա-ին:

Սերենս պատմիչը Աբրահամ կաթողիկոսի մասին խոսելիս հետևյալն է գրում. «Եւ ի նմին ամի վաղճանեցաւ երանելին Աբրահամ»³³:

Մահվան և թաղման մասին գրում է Օրմանյան սրբագանը. «Մահվան պարագաները և թաղման տեղը հիշված չեն: Ասոնք Դվնա մեջ տեղի ունեցած են աներկբայաբար»³⁴:

26. Կոմիտաս Ա Աղցեցի (615—628).— Արագածոտն գավառի Աղցի գյուղից: Նշանակվում է եպիսկոպոս Մամիկոնեից (Տարոն) և վանահայր Գլակա վանքի: Սմբատ Բագրատունի մարզպանի հովանավորությամբ գումարում է պարսից ժողովը, որտեղ բոլորի ներկայությամբ բանաձևում է հայոց եկեղեցու դավանությունը, երեք տիեզերական ժողովների կանոնների վրա:

Կոմիտասը ձեռնարկում է Վաղարշապատի եկեղեցիների վերանորոգության և բա-

րեկարգությանը: 618 թվին հիմնովին վերակառուցում է ս. Հռիփսիմեի եկեղեցին:

Գրել է ս. Հռիփսիմյանց կույսերի շարականը՝ «Անձինք նոիրեալք», նրա օրով Դվինում խմբագրվում է «Կնիք հաւատոյ»-ն (հրատարակված Կարապետ եպիսկ. Տեր-Մկրտչյանի կողմից 1914 թվին):

Թաղված է ս. Հռիփսիմեի վանքում. «Ապա վախճանեալ տէր Կոմիտաս՝ պատրիարք Հայոց, դնի ի տապանի յիրում շինեալ եկեղեցուջն մերձ հանգստարանի սրբոյն Հռիփսիմեայ»³⁵:

Շահխաթունյանը ս. Հռիփսիմեի վանքում (ներսում) մատնանշում է գերեզմանատեղն էլ. «Ի մէջ այսր տաճարի գտջեալ քեմին սրբոյ սեղանոյ՝ ուր դնի գրակալ ընթերցուածոց, է տապան երանելոյն Կոմիտասայ կաթողիկոսի վայելչակերտ յարդարողի սրբոյ եկեղեցոյս ըստ աւանդութեանն հասելոյ առ մեզ, և վէմն՝ որ կայ ի վերայ հարթ հաւասար սաղայատակին, է մեծ դրութեամբ և ձևով տապանաքարի՝ որոյ նման ոչ գտանի ի բովանդակ սաղայատակին անդ, և եթէ լեալ իցէ յառաջագոյն ի նմա մակագրութիւն անուան, գուցէ ընդ այլ քայքայեալ սաղայատակացն՝ ի քանի նուագս նորոգութեանցն փոփոխեալ և անհետացեալ»³⁶:

Հիրավի, Շահխաթունյան սրբազանի նկարագրած մեծ սալահատակը այսօր էլ գտնվում է ս. Հռիփսիմեի տաճարում, սեղանի առջև, և համեմատած մյուս սալաքարերին, մեծ է. քայց որևէ արձանագրություն չունի:

27. Քրիստափոր Բ Ապահունի (628—680).—Ապահունյաց եպիսկոպոս. Վարազ-տիրոց մարզպանի և Թեոդորոս Ռշտունու առաջարկությամբ ընտրվում է կաթողիկոս իբրև հաջորդ Կոմիտասի³⁷: «Քրիստափոր, ի գաւառէ Ապահունեաց յազատ տանէ՝ ...ի պատճառս շփոթութեան ինչ ծագելոյ ընդ մէջ նախարարաց՝ որպէս թե՛ նա իցէ պատճառ այնմ, հրաժարի ինքնին յիշխանութենէ հայրապետութեան և գնացեալ յոտն Մասեաց լերին յնոլեաց գիո՛ղ՝ շինէ անդէն վանս կրօնատրաց և մնացեալ անդ խստակրօն վարուք՝ վախճանի»³⁸: «Քրիստափոր՝ իւրովի հրաժարեցաւ յիշխանութենէ կաթողիկոսութեան լետ վարելոյ օայն ամս երեք, և փոքր ինչ անելի. և գնացեալ յոտն մասեաց՝ շինեաց զվանք մի մեծ ի Էփրն Ուղեաց. և ժողովեալ անդ զմիան-

³¹ Երվանդ վրդ. Տեր-Մինասյան, «Հայ եկեղեցու հարաբերությունները Ասորվոց եկեղեցիների հետ», ս. Էջմիածին, 1908 թ., էջ 92:

³² Տեսուն Միխայելի Ասորոց պատրիարքի «Ժամանակագրութիւն», Երուսաղեմ, 1871 թ., էջ 265:

³³ Սերենոսի եպիսկոպոսի «Պատմութիւն ի Հևոսակն», Թիֆլիս, 1913, էջ 124:

³⁴ «Ազգայատուն», մասն Ա, էջ 658:

³⁵ Ստեփաննոս արքեպիսկոպոս Օրբելյան, «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 114:

³⁶ Շահխաթունյանց, հ. Ա, էջ 270—271:

³⁷ Իրախանակերտցի, էջ 76:

³⁸ Շահխաթունյանց, հ. Ա, էջ 184:

ձուևս՝ եկաց կրօնատրութեամբ և խստակեաց վարուք մինչև ցվախճան կենաց իրոց»³⁹:

Վերոհիշյալ վկայությունների համաձայն Բրիտանական Բ կաթողիկոսը հավանաբար թաղվել է իր կառուցած վանքում՝ ի Մասյաց Ուոն:

28. Եզր Ա Փառածնակերոցի (680—641).—Նիգ գավառի Փառածնակերտ գյուղից: Մասնակցեց Կարևո ժողովին 633 թվին: Վերաշինել է ս. Գայանեի տաճարը 632 թվին:

Պատմաբան կաթողիկոսը խոսելով Եզրի մահվան մասին գրում է. «Եւ իսկ և իսկ վախճանէր հայրապետն Եզր՝ կայեալ զաթոռ հայրապետութեան ամս տասն»⁴⁰:

Մահվան և թաղման մասին Օրմանյան սրբագանը գրում է. «Եզրը կվախճանի Դվինի առման միջոցին, թեպետ ոչ օրը և ոչ պարագաները չունինք պատմությանց մեջ»⁴¹:

29. Ներսես Գ Իշխանի (641—661).—Տայոց աշխարհի Իշխան գյուղից էր. Իր հայրապետության ժամանակաշրջանին հետամուտ եղավ ավերակները վերանորոգելու շինեց Դվինի ս. Սարգիսը, Խորվիրապի վանքը, Չվարթնոց տաճարը՝ 643—652 թթ.: Վերոգրյալ շինարարությունների պատճառով էլ կոչվում է Ծինող:

Ըստ Դրասխանակերտցու, Ներսես Գ կաթողիկոսի թաղման վայրը Չվարթնոցն է, ըստ այլ վկայության՝ Խորվիրապը: Ահա Դրասխանակերտցու վկայությունը. «Եւ ապա իբրև եկաց մեծ հայրապետն Ներսես յառաջնորդութեան անդ իրում ամս քսան՝ հրաժարեալ ի կենաց աստի, եղա մարմինն ի հանգստարանի անդ, զոր իրովի իսկ յօրինեալ էր ի հիսիսոյ կողմանէ բազմապայծառ քաւարանին, որ ըստ արժանի աթոռոյ իրում նախահօրն էր կանգնեալ յարկ»⁴²:

Օրմանյան սրբագանը հաստատում է, որ Ներսես Ծինողը թաղվել է Չվարթնոցում. «Եվ ահա միևնույն 661 տարին յոր կյանքը կը կնքէ Չվարթնոց եկեղեցուն կից իր կանոնացած հայրապետական բնակարանին մէջ: Յուր գերեզմանն ալ միևնույն տեղը կրույալ, այն շիրիմին մէջ՝ զոր իրովի իսկ յօրինեալ էր, նույն եկեղեցւոյ հիսիսակողմը, որ Լուսատրչի փառատր անուանին արժանատր՝ փառատր շինուած մը եղած էր»⁴³:

Կան նաև այլ վկայություններ: «Ներսես հայրապետ՝ Ծինող կոչեցեալ, լցեալ զժամանակ կենաց իրոց, վախճանեցաւ յերրորդում ամի իշխանութեան Գրիգորի պատրկի Մամիկոնէի, կացեալ ի հայրապետութեան ամս Ի և ամիսս իբր 9 և թաղեցաւ ի հանգստարանի անդ՝ ի հիսիսոյ կողմանէ եկեղեցւոյն, զոր շինեաց նա ինքն Ներսես ի վերա Խոր Վիրապին յԱրտաշատ քաղաքի»⁴⁴:

«Եւ կացեալ ի հայրապետութեան զամս քսան՝ վախճանի և դնի մարմինն նորա ի Հիսիսոյ կողմանէ եկեղեցւոյ Վիրապին Արտաշատու՝ զոր իր էր շինեալ»⁴⁵:

Հ. Մ. Չամչյանին հետևելով Հ. Մ. Բժըշկյանը նույնպես գրում է. «Ներսես Ծինող... մահը, որ եղավ յամի 661 և քսաններեք տարի հայրապետություն ըրավ բարոյապես ու թաղեցավ ի Խոր-Վիրապը»⁴⁶:

30. Անաստաս Ա Ակոռացի (661—667).—Եղել է Ներսես Ծինող կաթողիկոսի գործակիցը և Չվարթնոց տաճարի շինության վերահսկողը: Կաթողիկոս եղած ժամանակ Ակոռիում շինեց վանք և եկեղեցի. «Բայց մեծն կաթողիկոսն Անաստաս շինէ զպայծառապանոյն եկեղեցին ի հայրենի բնակութեան իրում ի վանս Դաստակերտին Ակոռոյ՝ կացորդ զնա յարդարեալ քահանայական ուխտի միակրօնից և այլոց ևս կղերք եկեղեցւոյ ի պաշտօն աստուածային խորանին և ի սածողութիւն հանգստեան իրոց և տնանկաց և աղքատաց... եւ մինչդէռ խորհեր մեծն Անաստաս ժողովօք եպիսկոպոսաց զեղեայսն հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանէր, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց»⁴⁷:

Օրմանյանը Անաստասի մահվան և թաղման մասին գրում է հետևյալը. «Անաստասի մահվան պատճառ պետք է սեպեմք ծերությունը, որովհետև Ներսեսի կաթողիկոսության քսանամյա տևողության մեջ, անոր գործակից եղած էր: Իսկ թաղումը շատ հարմար է դնել Ակոռիի յուր շինած եկեղեցիի քովը...»⁴⁸:

31. Իսրայել Ա Օթմսեցի (667—677).—Եղել է Տայոց աշխարհի եպիսկոպոս. մասնակցել է Դվինի 645 թ. ժողովին. Օրմանյան սրբագանը գրում է Իսրայել կաթողիկոսի թաղման և գերեզմանի մասին. «Իսրայելի կաթողիկոսության տասնամյա միջոցը փառատր շինուած մը եղած էր»⁴⁹:

³⁹ Մ. Չամչյան, «Պատմութիւն հայոց», Վենետիկ, 1785, էջ 327:

⁴⁰ Դրասխանակերտցի, էջ 82:

⁴¹ «Ազգապատում», մասն Ա, էջ 705:

⁴² Դրասխանակերտցի, էջ 90:

⁴³ «Ազգապատում», մասն Ա, էջ 744:

⁴⁴ Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն հայոց», Վենետիկ, 1785, Բ. Բ, էջ 360:

⁴⁵ Ծախաթունյանց, Բ. Ա, էջ 185:

⁴⁶ Հ. Մ. Բժըշկյանց, «Համառոտ նկարագիր վարուց կրկնի արանց», Վենետիկ, 1850, էջ 647—648:

⁴⁷ Դրասխանակերտցի, էջ 91:

⁴⁸ «Ազգապատում», մասն Ա, էջ 749:

կելով չենք կրնար ոչ նորա թաղման տեղը ճշտել, և ոչ ալ յուր անձին ու նկարագրին վրա կատարյալ կերպով տեղեկություն ավելացնել»⁵¹:

32. Սահակ Գ Չորսփորեցի (677—703).—Չորսփորեցին իր հոգևոր կրթությունը ստացել է Արագածոտն գավառի Տեղերի (Աշտարակի շրջան) և Աստվածածին վանքի վանահայր, Թեոդորոս Քոթեմալոր վարդապետի մոտ:

Սահակ Գ-ի կաթողիկոսության տարիները գուգադիպել են արաբական և հունական արշավանքների ժամանակաշրջանին և նա չի կարողացել արդյունավոր գործունեություն ծավալել:

Ողբերգական է եղել նրա մահը: Ամիրապետի հրամանով Հայաստան է ուղարկվում Մոհամատ Ոգբա գորապետը, որպեսզի հաշերին խստիվ պատժի: Հայ իշխանները սարսափահար եղած հպատակության թուղթ են կազմում և կաթողիկոսին ուղարկում, որպեսզի նա փրկության մի հնար գտնի: Դըժբախտ կաթողիկոսը մի աղերսագիր է գրում Ոգբային: Այս աղերսագրով Չորսփորեցին դուրս է գալիս Ոգբային ընդառաջ, սակայն կայանավորվում և աքսորվում է. դառն աքսորից քաղաքված առողջությունը նրան հնարավորություն չի տալիս տեղ հասնելու: Դամասկոսից վերադառնալու ճանապարհին Խառան քաղաքում նա ծանր հիվանդանում է ու վախճանվում, մահից առաջ պատվիրելով, որ դագաղի մեջ իր ձեռքը դրված լինի աղերսագիրը: Մահվան մանրամասնությունները պատմում է Դրասխանակերտցին. «Իսկ ոստիկանն Ոգբայ իբրև լուսա գմահ սրբոյն Սահակայ՝ վաղվաղակի առաքեաց դեսպակս հրամայէ ոչ թաղել զնա, մինչ զի ինքն իսկ երթից: Եւ իբրև չոգա՝ վաղվաղակի առ դիսպատիկ մարմին առնն աստուծոյ մտեալ, ձեռն նմա շարժէր, ըստ օրինին իրոց իբրև կենդանոյ և ողջունէր զնա ի յեզու իր՝ սալամալէք ասելով... «Այո՛ խնդիր քո կատարեալ է՝ պատուական այդդ Աստուծոյ»: Եւ նամակ ի նախարարս հայոց գտեալ և հանդերձ սուրբ մարմնով հայրապետին ի հայս առաքեալ բազում պատուով և թաղեալ ի բաց զյանցանն գոր առ նա գործեցին, և ինքն ընդ կրունկն դարձեալ՝ դառնայ ի տեղի իր»⁵²:

Չորսփորեցին ունի նաև գրական վաստակ. նրա գրչին են պատկանում եկեղեցու և խաչի շարականներից շատերը, ինչպես նաև «Էջ Միածին ի Հօրէ»-ն:

33. Եղիա Ա Արճիշեցի (703—717).—Բզնունցալ եպիսկոպոսն էր և հաջորդեց

Սահակ Չորսփորեցուն: Թաղվել է Դվինում, ինչպես այդ մասին որոշ չափով ակնարկում է Դրասխանակերտցին. «Եւ ապա տրաւ լցեալ զկէտ հայրապետութեան ամս չորեքտասան՝ վախճանի»⁵³: Դրասխանակերտցին, սակայն, թաղման վայրը չի նշում նկատի առնելով, որ հայրապետական Աթոռը գտնվում էր Դվինում և բնականաբար նույն վայրում էլ թաղեցին: «Յաջորդէ յաթոռ իւր և կացեալ ընդ ամենայն զամս տասն և չորս ամիսս իբր վեց՝ վախճանի»⁵⁴:

34. Հովհաննես Գ Օձնեցի (717—728).— Իմաստասեր կաթողիկոս, աշակերտել է Թեոդորոս Քոթեմալորին: Արագածոտն գավառի եպիսկոպոս է ձեռնադրվում. պալաքում է պավլիկյան, երևութական և այլ ադանդավորների դեմ: Գումարում է Դվինի յթեմերորդ (720 թ.) և Մանազկերտի (726 թ.) ժողովները:

Մահվան մասին վկայում են Դրասխանակերտցին. «Վախճանի, կացեալ յաթոռ Հայրապետութեան ամս մետասան»⁵⁵, ապա՝ Գանձակեցին. «Ծինէ և եկեղեցի մեծ ի գիւղն իւր Օձնն, որ հուպ է առ քաղաքն Լօռէ, և իւր ընտրեալ տեղի բնակութեան սակա մի ի բացեալ ի գիւղէն՝ անդ դադարէր»⁵⁶: Օրմանյանը գրում է. «728-ին կնքեց յուր բազմաշխատ և բազմարդյուն կյանքը... թաղման տեղն ալ հիշված չէ հիներեն, բայց Օձնեցիի գերեզմանը իբր ոխտատեղի կը պատվի այժմյան Արդուի գյուղը, հին Օձնիի արևմտակողմը»⁵⁷:

35. Դավիթ Ա Արամոնեցի (728—741).— Կոտայեցի կամ Արամոնեցի: Որոշ ժամանակով հայրապետական Աթոռը փոխադրում է իր հայրենի Արամոնք (այժմ՝ Արամուս) գյուղը, ուր կառուցում է եկեղեցի և բնակության սենյակներ: Վախճանվում է 741-ին, 13 տարի պաշտոնավարելուց հետո. թաղվում իր ծննդավայր Արամոնքում, այժմյան Կոտայքի շրջանի Արամուս գյուղում, իր սեփական կալվածքում: Այս մասին Դրասխանակերտցին գրում է հստակորեն. «Կացուցանեն յԱթոռ հայրապետութեան զԴավիթ ի գեղջէն Արամօնից, որ ի Կոտայսն գաւառի: Այս գիւղ սեփական էր տան կաթողիկոսարանի... շինէ եկեղեցի ի գեղն Արամօնս գեղեցկայարմար յարդարմար և դնէ շուրջանակի նորա տուն բնակութեան՝ վայելոյ ինն յարմարեալ: Եւ անդ զկէտ կենացս քաղա-

⁵¹ Դրասխանակերտցի, էջ 100:

⁵² Ծանխաթունյանց, հ. Ա, էջ 186:

⁵³ Դրասխանակերտցի, էջ 104:

⁵⁴ Կիրակոս Գանձակեցի, «Պատմություն հայոց», Երևան, 1961, էջ 70:

⁵⁵ «Ազգապատում», մասն Ա, էջ 843—844:

⁴⁹ Նույն տեղում, էջ 754:

⁵⁰ Դրասխանակերտցի, էջ 96—97:

քաղաքային իրեն ամս երեքստասան վախճանի. հանգուցանելով գնա մերձ առ նույն իսկ եկեղեցի»⁵⁶: «Եւ ապա ինքն յետ կալոյ յԱրամօսն իբր ամս ութ՝ դարձաւ անդրէն ի Դոմին յաթոռն կաթողիկոսական. և կացեալ ընդ ամենայն ամս ԺԲ՝ վախճանի. որոյ գմարմին տարեալ հանգուցանեն յԱրամօսն առ եկեղեցեան՝ գոր իւր էր շինեալ»⁵⁷:

Այսօր, նույն Արամօս գյուղում, գոյություն ունի հիշատակված եկեղեցին:

36. Տրդատ Ա Ռթմեցի (742—764).—Վաճառնի Ռթմուս գյուղից էր. Դրասխանակերտիցն խոսելով Տրդատ Ա կաթողիկոսի մասին, հաղորդելով նրա մահը, շիրմատեղը չի մատնանշում. «Եւ այսպէս ապա խաղաղութեամբ հասեալ ի կէտ կոչմանն Քրիստոսի՝ վախճանի. կացեալ յԱթոռ Հայրապետութեան ամս ԻԳ»⁵⁸: Սակայն, բացի Օրմանյանից ոչ ոք չի գրում նրա թաղման վայրի մասին, համարելով այն Ռթմուսը. «Քանի որ վանանդեցի նախարարներու ցեղեն էր, թերևս յոր գերեզմանը ծննդավայրին մեջ եղաւ, յոր իշխանագոնն նախնաց դարաբարաններուն մեջ»⁵⁹:

37. Տրդատ Բ Դասնավորեցի (764—767).—Սրա հայրապետության կարճ ժամանակաշրջանը համընկնում է սրաբների տիրապետության ամենադժնդակ օրերին: Վախճանվել և թաղվել է Դվինում, հալանարար: Այդ մասին ակնարկում է Դրասխանակերտիցին. «Ի գնալ նորա ի Դվին քաղաք՝ իսկ և իսկ վախճանէր երկրորդն Տրդատ»⁶⁰:

38. Սիոն Ա Բավոնեցի (767—775).—Բավոնյաց գյուղից էր. նախապես եպիսկոպոս Աղճնյաց. հռչակված էր իբրև սուրբ և հրաշագործ մարդ: Գումարել է եկեղեցական ժողով Պարտավում՝ 768 թվին: Դժբախտությամբ անցկացրեց իր ժամանակը արաբների կրոնական հաղածանքների պատճառով: Դրասխանակերտիցին խոսելով Սիոն Ա կաթողիկոսի մասին, գրում է. «Բայց նորա բազում և հրաշալի ճգնողական վարուք վճարեալ զկէտ կենաց իւրոց իբրև ամս ութ՝ վախճանի, եղեալ ի քնարանի ընդ հարս իւր»⁶¹: «Ապա ի 775 նույն առաքինի վարքով և հսկողութեամբ փոխեցաւ առ Տէր»⁶²:

39. Եսայի Ա Եղիպատրուշեցի (775—788).—Նիջ գավառի Աղիպատրուշ կամ Եղիպատրուշ գյուղից, այրի և մուրացիկ կնոջ միամոր երեխան: Մայրը մուրալով հասել էր Դվինի կաթողիկեի դռանը ասելով. «Ոչ գիտեք, զի սակս կաթողիկոսութեան գորդեակս իմ աստ սնուցանեմ»⁶³: Վերջապես ընդունվում է Դվինի հայրապետանոցին կից դպրոցում, որտեղ և ուսանում է: Ուղեկցել է Սիոն կաթողիկոսին և մասնակցել Պարտավի եկեղեցական ժողովին՝ 768 թվին:

Հովհաննես պատմաբան կաթողիկոսը խոսելով Եսայի Ա կաթողիկոսի մահվան մասին, գրում է. «Եւ սորա քաղաքավարեալ զկեանս իւր իբրև ամս երեքստասան՝ վախճանեալ դնի ընդ հարս իւր», իհարկէ՝ Դվինում⁶⁴:

«788 վախճանեաց յայն աուրս Եսայի կաթողիկոս, կացեալ ի հայրապետութեան ամս ԺԳ»⁶⁵:

40. Ստեփաննոս Ա Դվնեցի (788—790).—Կարճատև է եղել սրա կաթողիկոսությունը, շուրջ մեկուկես տարի: Վախճանվել ու թաղվել է Դվինում. «Ստեփաննոս ոմն ի Դվին քաղաքէ կացուցանէին յառաջնորդութեան անդ՝ ոչինչ անելի բան զերկուս ամս կեցեալ»⁶⁶:

41. Հակոբ Ա Դվնեցի (790—791).—Մեկ տարվա գործունեություն ունենալուց հետո, վախճանվել ու թաղվել է Դվինում. «Յովաք յաջորդեալ յնստանէն ի կուրսպաղատին Ապարանից՝ իբրև ամիսս վեց միայն տևեալ»⁶⁷:

42. Սողոմոն Ա Գառնեցի (791—792).—Նախապես Մաքեճացոց վանքում ճգնալիոր էր: Վախճանվել և թաղվել է Դվինում. «Եւ ըստ ամին այսմիկ գործն կատարէր, զի ոչ անելի բան զմի ամ կեցեալ՝ փոխի յաշխարհէ աստի և դնի ընդ հարս իւր և կենդանագրի ի բարարանի սրբոյ»⁶⁸:

Համաձայն Օրմանյանի բացատրության «գոր պետք է իմանալ թե կաթողիկոսաց շարքին մեջ կթաղվի»⁶⁹:

(Շարունակելի)

⁵⁶ Դրասխանակերտցի, էջ 104—105:

⁵⁷ Շահխաթունյանց, հ. Ա, էջ 187:

⁵⁸ Դրասխանակերտցի, էջ 105:

⁵⁹ «Ազգապատում», մասն Ա, էջ 878:

⁶⁰ Դրասխանակերտցի, էջ 107:

⁶¹ Դրասխանակերտցի, էջ 107:

⁶² Հ. Մ. վարդապետ Բժշկյանց, «Համառոտ նկարագիր երևելի արանց», Վենետիկ, 1850, էջ 790:

⁶³ Դրասխանակերտցի, էջ 108:

⁶⁴ Նույն տեղում:

⁶⁵ Հ. Մ. Զամչյան, Հայոց պատմություն, Բ, էջ 419:

⁶⁶ Դրասխանակերտցի, էջ 108:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Նույն տեղում, էջ 111:

⁶⁹ «Ազգապատում», մասն Բ, էջ 912: